ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԹԵԼ-ՍԵԼ ՎՃԱՐԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐՈՎ

26.05.2020 16:49

Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և «Թել-Սել» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության համագործակցության շրջանակներում այսուհետ կարող եք Ձեր անդամավճարը կամ փաստաբանների պալատին ուղղված այլ գումարները վճարել նաև **ԹԵԼ-ՍԵԼ (TELCELL) վճարային տերմինալների** միջոցով:

Թել-Սել վճարային տերմինալի միջոցով կարող են կատարվել փաստաբանների պալատին ուղղված հետևյալ վճարումները.

- փաստաբանի անդամավճար.

- փաստաբանի հավակնորդի մուտքի վճար.

- այլ պետության փաստաբանի հավատարմագրման վճար.

- փաստաբանի օգնականի մուտքի վճար.

- փաստաբանի օգնականի ամսական վճար.

- փաստաբանի լրացուցիչ վերապատրաստման վճար.

- տուգանքի գումար.

Տերմինալներով փաստաբանների պալատի օգտին կատարված վճարումներից «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲ ընկերությունը վճարումը կատարողից տերմինալ մուտքագրելու միջոցով գանձում է միջնորդավճար՝ հետևյալ սակագներով.

- 100 ՀՀ դրամից մինչև 1 000 ՀՀ դրամը (ներառյալ) վճարման դեպքում՝ 100 ՀՀ դրամ.

- 1 001 ՀՀ դրամից մինչև 10 000 ՀՀ դրամը (ներառյալ) վճարման դեպքում՝ 200 ՀՀ դրամ.

- 10 001 ՀՀ դրամից մինչև 100 000 ՀՀ դրամը (ներառյալ) վճարման դեպքում՝ 300 ՀՀ դրամ:

Ինչպե՞ս ԹԵԼ-ՍԵԼ (TELCELL) վճարային տերմինալով կատարել վճարում.

Քայլ 1 - տերմինալի գլխավոր էջի ստորին հատվածում ընտրել «Այլ» սենսորային կոճակը.

Քայլ 2 - բացված էջի վերին հատվածում ընտրել «Այլ ծառայություններ» սենսորային կոճակը.

Քայլ 3 - բացված ցանկից (2-րդ էջ) սեղմել ՀՀ փաստաբանների պալատի տարբերանշանով սենսորային կոճակը և, ընտրելով համապատասխան վճարման տեսակը՝ կատարել համակարգի կողմից առաջարկվող հրահանգները:

Առաջարկվող նորություններ

29.06.2018
ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԻՋԻ ՓԵՅ ՎՃԱՐԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԼՆԵՐՈՎ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })